

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՉ ՀԱՄԱՐԺԵՔ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ
ՈՐՊԵՏ ԱՆՁԻ ՍՈՑԱԽՏԱԾԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Մարդու կողմից մարդու ընկալումը, կամ սոցիալական ընկալումը դասական, հանրագիտական բնութագրմամբ առաջին հերթին հոգեկան իմացական գործընթաց է: Այս գործընթացն իր մեջ ներառում է հոգեկան արտացոլման գրեթե բոլոր մակարդակները. այսինքն՝ զգայությունների, ընկալման, պատկերացումների ու մտածողության միջնորդությամբ մարդիկ ընդունում և վերամշակում են արտաքին աշխարհից ստացված լրատվությունը: Սոցիալական, ինչպես նաև ցանկացած այլատիպ ընկալումների համար բնութագրական են առարկայությունը, օբյեկտիվությունը և սուբյեկտիվությունը, ամբողջականությունը, ինչպես նաև համարժեք և ոչ համարժեք լինելը: Նոր մարդ ընկալելիս սուբյեկտն առաջին հերթին ուշադրություն է դարձնում նրա արտաքին որոշ կողմերին՝ դիմային արտահայտչականությանը, մարմնի լեզվին և այլն: Այս գործընթացում ձևավորվում են ուրիշ մարդկանց մասին պատկերացումներ, բնավորության գծերը որոշելու ընդունակություններ, հուզական-դիմամիկ յուրահատկություններ բացահայտելու, մարդկանց մասնագիտության մասին որոշ պատկերացումներ կազմելու ունակություններ և այլն [7]:

Ըստ սոցիալական ընկալման հոգեբանական տեսության հիմնադիր Ա.Ա.Բոդալյովի, մարդու կողմից մարդու ընկալումը բնութագրվում է իմաստավորվածությամբ, դրա հիմքում ընկնում են հոգեկան գործընթացները, անձի մոտիվացիան և դիրքորոշումները:

Ա. Բոդալյովի, Ե. Սմիրնովայի հետազոտությունները ցույց են տվել, որ սոցիալական ընկալումները, մարդու կողմից մարդու որպես անձնավորության ընկալումը առավելապես իրականացվում է խոսքի միջոցով և խոսքի շնորհիվ [6]:

Շնորհիվ խոսքի ընկալվող մարդու կերպարը ստանում է բովանդակություն, ինչը չկա զգայական ընկալման արդյունքում: Եվ, ընդհանրապես, մարդն ընկալվում է ոչ միայն իր ֆիզիկական հատկանիշներով (հասակ, սեռ, տարիք, կազմվածք, դեմք, աչքեր), այլ նաև որպես անձ, որը որոշակի կարգավիճակ ունի հասարակության մեջ և այս կամ այն դերն է խաղում ընկալող մարդու կյանքում: Ցանկացած սոցիալական ներգործություն միջնորդավորվում է ընկալողի անձնական փորձով, ներաշխարհով, նրա նպատակներով, անձնային

վերաբերմունքով: Սոցիալական ընկալման նման մեկնաբանությունը, ըստ էության, պատասխան է տալիս այն վիճահարույց հարցին, թե, արդյոք, ընկալումը - ակտիվ գործընթաց է, թե այն իրենից ներկայացնում է զգայարանների վրա ազդող, արտաքին ներգործությունների պարզապես պասիվ, հայելային արտացոլում: Այսինքն խոսքը ոչ միայն բուն ընկալման երևույթի որպես իմացական գործընթացի, այլև ուրիշի անձի և միջանձնային հարաբերություններում ընկալման գեներգիսի և առանձնահատկությունների մասին է: Սոցիալական ընկալման հիմնախնդիրը կարևոր տեղ է զբաղում սոցիալական հոգեբանության մեջ, առավելապես տեսական հետազոտություններում: Սակայն մի տեսակ անհասկանալի է, թե ինչու սոցիալական պերցեպցիայի հիմնախնդիրը ընկալվում է որպես միայն տեսական հետազոտությունների օբյեկտ, և ինչն էր պատճառը, որ հնարավոր չէ այդ տեսական հետազոտական արդյունքները կիրառել փորձարարական աշխատանքների ժամանակ:

"Սոցիալական պերցեպցիա" հասկացությունը առաջին անգամ առաջ քաշվեց Ջ. Բրուների կողմից (1947) և հասկացվում էր որպես սոցիալական տարաբնույթ գործոնների ընկալում: Բրուների նորամուծությունից մի քանի տարի անց "սոցիալական պերցեպցիա" հասկացությունը ձեռք բերեց այլ նշանակություն: Սոցիալական հոգեբանության մասնագետները (Ն.Անդրեևան, Մ.Դոնցովան, Ս.Կուզմինը և ուրիշներ) սոցիալական պերցեպցիայի տակ հասկանում էին ընկալման մի յուրատիպ ոլորտ, այսինքն սոցիալական օբյեկտների՝ առանձին անձանց, մարդկանց խմբերի, լայն սոցիալական հանրությունների, ինչպես նաև ամբողջ հասարակության ընկալում: Առաջացավ "միջանձնային պերցեպցիա" հասկացությունը որպես սոցիալական պերցեպցիայի հոմանիշ [2,3]:

XX դ կեսերին ամերիկյան սոցիալական հոգեբանության մեջ շատ մեծ տեղ էր տրվում դիրքորոշումների (attitude) հետազոտություններին: Իսկ հաջորդ տասնամյակներում "Ֆավորիտ" դարձան միջանձնային պերցեպցիային վերաբերող խնդիրները: Կարելի է ասել, որ բավականաչափ ուսումնասիրվել էին միջանձնային ընկալման ժամանակ առաջին տպավորության և դիրքորոշման դերի խնդիրները այդ տպավորության ձևավորման գործում, թեև ուզ բուն "սոցիալական նաև միջանձնային պերցեպցիայի" ֆեոմենը դեռևս չէր բացահայտվել: Անգամ "սոցիալական պերցեպցիան" մի շարք սոցիալական հոգեբանների կողմից հստակ չէր տարբերակվում "միջանձնային պերցեպցիայից": Սոցիալական պերցեպցիա ասելով, հասկանում էին մարդու կողմից "սոցիալական օբյեկտների" ընկալման գործընթացը:

Միջանձնային հարաբերությունների հիմնախնդրին նվիրվել են բազմաթիվ տեսական և փորձարարական հետազոտություններ (Վ. Կ.

Կոտիրլո, Յա. Լ. Կոլումինսկի, Տ. Ա. Բեպինա, W. Damon և այլն): Սոցիալ-հոգեբանական հետազոտություններում միջամծնային հարաբերությունները դիտվում են որպես որոշ երեխաների նախընտրումը մյուսներին, այսինքն հասակակիցը դառնում է հուզական գնահատման առարկա: Իսկ Ա. Ա. Բոդայլովի կողմից ղեկավարած ուսումնասիրություններում միջամծնային հարաբերությունների առարկա են դառնում ուրիշի (սոցիալական և անծնային որակների) մասին պատկերացումները, որոնք ծագում են միջամծնային ընկալման ընթացքում [6,12]: Մեկ այլ բավականին տարածված հետազոտական մոտեցման մեջ, որը զարգացնում են Ե.Ս. Սմիրնովան և Վ. Ռիտրոբինան, շեշտը դրվում է այն խնդրի վրա, թե երեխան ինչպես է ընկալում հասակակցի վարքի դրսևորումները, նրա ադարքները և գործողությունները: Ընկալվող երեխայի սոցիալական վարքը հանդես է գալիս որպես միջամծնային հարաբերությունների գլխավոր չափորոշիչ [12]:

Գիտակցության երկխոսական բնույթի մասին Ե. Օ. Սմիրնովայի առաջ քաշած վարկածի համաձայն երեխայի գիտակցությունը ի սկզբանե երկխոսական է, և իր մեջ միշտ ներկա է այդ ներքին ուրիշը, Ես-ը և ոչ - Ես-ը, որը սեփական նշանակությունը գիտակցելու հնարավորություն է տալիս, այսինքն ինքնագիտակցությունը: Երեխայի ինքնագիտակցության և ուրիշի նկատմամբ վերաբերմունքի օժտվածությունից (անհատական) զարգացումը կարելի է պատկերել այդ երկու սկիզբների բարդ համակցության տեսքով, որտեղ այդ ուրիշի ֆունկցիաներն ու անձնականացումը (պերսոնիֆիկացիան) տարիքի հետ փոխվում են: Սկզբում այդ ներքին Ուրիշը երեխայի համար մեծն է, իսկ մի որոշակի փուլում հասակակիցն է ստանձնում այդ դերը [12]: Այս մոտեցումը շատ համահունչ է Լ. Ա. Վիգոտսկու գիտակցության երկակիության մասին տեսությանը, որտեղ խոսքը գնում է այն ներքին նմանակի պատկերացման մասին, որն իրականությանը ամենամոտ պատկերացումն է գիտակցության մասին: Դա էլ իր հերթին մոտ է անձի մասնատվածությանը ըստ "Ես"-ի և "Այն"-ի, որը համապատասխանորեն բացահայտում է Ջ. Ֆրոյդը [9]:

Այս տեսությունների համակցված վերլուծությունը հանգեցրեց սոցիո-գեներգի երևույթին, ինչն ըստ Վ.Վ.Աբրամենկովայի կողմից նոր վերաիմաստավորման նշանակում է սոցիալական առանձնահատկություններով պայմանավորված անձնավորության և միջամծնային հարաբերությունների ծագում ու զարգացում տարբեր մշակույթներում, տարբեր սոցիալ-պատմական շրջաններում: Այսինքն երեխայի անձի զարգացումը հարկավոր է դիտել

տարիք—մշակույթ— պատմություն եռակի կոնտեքստի շրջանակներում [1 , էջ 62 – 63]:

Ըստ մեր ենթադրության միջանձնային հարաբերություններում նկատվող խաթարումների հիմքում ընկած են և սոցիալական ոչ համարժեք ընկալումները:

Վերջիններս արդյունք են որոշակի սոցիալական բացասական ներգործությունների, որոնցից են ա/ ընտանիքը (լիարժեք և ոչ լիարժեք, բարենպաստ կամ անբարենպաստ, կոնֆլիկտային, պրոբլեմային, քրեածին և այլն) գլխավոր և առաջնային սոցիալական ներգործությունների մի համալիր է կազմում, մեծապես պայմանավորելով երեխայի վաղ սոցիալականացումը, բ/ դաստիարակչական ներգործությունները, երեխայի սոցիալական ընկալումները և ես-ի դրսևորումները փոխադարձ կապի մեջ են:

Դետազոտության ընթացքում առաջադրվեց և այն վարկածն, ըստ որի սոցիալական ներգործությունների ոչ համարժեք ընկալումները (մարդ - մարդ, մարդ-ընտանիք, մարդ-հասարակություն և մարդ-իրավունք հարաբերություններում) առաջացնում են անձնավորության սոցիալական ախտահարման (պաթոլոգիայի) [4,5], բարոյա-իրավական դեգրադացիայի հոգեբանական նախադրյալներ, որոնք նրան ընկալունակ են դարձնում միջավայրի բացասական ազդեցությունների նկատմամբ: Այժմ փորձենք ներկայացնել տարբեր տարիքային փուլերում անձնավորության բարոյա - իրավական սոցիալականացման նախադրյալների զարգացման դինամիկան (շարժընթացը) սոցիալական ներգործությունների ոչ համարժեք ընկալման պայմաններում:

Երեխայի նախնական սոցիալականացման ընթացքում սոցիալական ընկալումների զարգացման և ես-ի ձևավորման սկզբնադրյուրը ընտանիքն է, ծնողն իր արտաքինով, արտահայտչամիջոցներով, վարքով, մոտեցումներով, գործողություններով, ընտանիքի անդամների հետ իր հարաբերություններով: Այս փուլում երեխան նախ ընկալում է ծնողին, անմիջապես շրջապատողներին, և նրանցով միջնորդավորված ձևավորվում են նրա ես-ի նախադրյալները [10,14]: Անբարենպաստ ընտանիքն ինքնին արդեն պրոբլեմային, կոնֆլիկտային է, առկա են երեխայի հանդեպ հոգածության պակասը, մանկավարժական բարձիթողությունը: Սառը, պաշտոնական, անտարբեր, լարված, երբեմն էլ քրեաբարոյա հոգեբանական մթնոլորտը և դրանից բխող ներգործությունը երեխայի մեջ ստեղծում են ինչպես կարգազանց, ոչ համարժեք, ոչ ադապտիվ, այնպես էլ ոչ համարժեք ինքնագնահատականի և ինքնագիտակցության, այսինքն ես-ի կարևոր բաղադրա-

տարրերի հոգեբանական անբարենպաստ նախադրյալներ: Կրտսեր դպրոցական տարիքում վառ արտահայտված այդ նախադրյալների ձևավորումը նախ և առաջ միջնորդավորվում է ծնող-երեխա հարաբերություններով, որոնց ընթացքում հետզհետե երեխան հակազդում է ծնողի ես-ին և ծգտում ինքնահաստատվել:

Այսինքն – հոգեբանորեն օրինաչափ է, որ անբարենպաստ ընտանիքում և խաթարված հարաբերություններում սոցիալական ընկալումների ու ես-ի հիմնադրույթի ձևավորումը ընթանում է որոշակի շեղումներով: Սոցիալական զարգացման մակարդակով այդպիսի ընտանիքի երեխան բավականին հետ է մնում իր այն հասակակիցներից, որոնք ապրում են նորմալ պայմաններում: Փաստորեն, հաստատում են մեր հետազոտության և ռուս կոլեգաների ուսումնասիրությունների արդյունքները ոչ լիարժեք, անբարենպաստ ընտանիքներում մեծացող երեխաների մասին[14]:

Սոցիալական (հասարակայնորեն ընդունելի, լիարժեք, դաստիարակչական) համարժեք ներգործություններն ապահովում են երեխայի համարժեք սոցիալական ընկալումը: Այս պարագայում երեխայի անձնավորումը ընթանում է առանց շոշափելի շեղումների, կոնֆլիկտների: Երեխայի անձի կայացումը իրականացվում է անհատակողմնորոշիչ մոդելով, այսինքն ամեն ինչ արվում է ի նպաստ նրա ինքնաիրացման, ինքնաարտահայտման: Մեր ուսումնասիրության ընթացքում, հիմնվելով անձի սոցիալական վարքի շեղման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների մասին Ս.Ջ. Սրգունյանի [4,5] տեսական դրույթների վրա, մենք արձանագրել ենք մի շատ կարևոր հանգամանք ևս. երեխայի ինքնաիրացման և ինքնաարտահայտման պարագայում սոցիալական ոչ համարժեք (սխալ դաստիարակչական) ներգործությունը պայմանավորում է սոցիալական ոչ համարժեք ընկալումներ: Երբեմն ներգործության անբարենպաստությունը չի գիտակցում չափահասը այնքան ժամանակ, մինչև որ նա իր սխալները չի տեսնում մեծացող երեխայի ես-ի, վարքի, արարքների դրսևորումներում: Շատ հաճախ նախադպրոցականը ի վիճակի է հասկանալ ծնողի անգամ բարդ գիտակցական վերաբերմունք պահանջող հրահանգները, բայց հակադրվում է զուտ ասելու ոճի, հրամայական տոնի պատճառով:

Լ. Ս. Վիգոտսկին, խոսելով ճգնաժամային տարիքային փուլերը ուղեկցող չարածիության և նեգատիվիստական հակազդումների մասին, խնդրում է, փաստորեն, ծնողներին տարբերել երեխայի համառությունը նեգատիվիստական հակազդումից[8]: Ըստ Լ.Վիգոտսկու, երեխայի վարքը նեգատիվիստական(բացասական) կկոչվի այն պահից, երբ նրա համար

մինևույն կլինի, թե ծնողը ինչ է խնդրում, երբ արարքի և հրաժարման դրդապատճառը ոչ թե բուն գործունեության մեջ, այլ ծնող-երեխա հարաբերության մեջ է, երբ նեգատիվիստական դիրքորոշման իրական էությունը – հակառակ գործելն է, այսինքն ի հակադրում նրան, ով խնդրում է [8]:

Իսկ Ա. Ռոմանովն իր հերթին երեխայի վարքի խանգարումները բնութագրում է հետևյալ կերպ: կայուն, կրկնվող հակասոցիալական վարք (երբ խախտվում են ուրիշի իրավունքները, տարիքին համապատասխան սոցիալական նորմերը, վարքի կանոնները և ուրիշների հետ փոխհարաբերությունները) ու կայուն, կրկնվող ագրեսիվ վարք և այլն: Նա մշակել է վարքի խանգարումների իրավիճակային - անձնային հակազդումների մի համալիր - ագրեսիվություն-անզսպվածություն- նեգատիվիզմ- դեմոնստրատիվություն- նեղացկոտություն (հուզական անկայունություն)- կոնֆլիկտայնություն- հուզական օտարացվածություն- տխմարություն (երբ ծիծաղով, անլրջությամբ է արձագանքում մեծի դիտողություններին)- անվճռակացություն- վախեր- տագնապայնություն- անճկունություն- էզոցենտրիզմ – ուշադրության դեֆիցիտ- դանդաղկոտություն- մտավոր լարումից խուսափում – շարժողական արգելակում- խոսքային արգելակում- անաշխատունակություն- չի հասկանում խոսքային հրահանգները և այլն: Ընդհանուր գծերով բնութագրելով վարքի խանգարումները, նա դրանց կազմում հուզական զարգացման խաթարումները համարում է որպես վճռորոշ գործոն [11]:

Այսպիսով, սոցիալական համարժեք ներգործությունները երբեմն երեխայի մեջ առաջացնում են սոցիալական ոչ համարժեք ընկալումներ, բացասաբար են անդրադառնում նաև ես-ի կազմավորման և շրջապատողների հետ հարաբերությունների վրա: Ծնողի մանկավարժորեն արդարացված ազդեցության չընդունումը միջնորդավորվում է նրա նկատմամբ երեխայի մեջ ձևավորված բացասական հուզական դիրքորոշումով, նեգատիվ վերաբերմունքով, այլ կերպ ասած, նրանց միջև խաթարված հուզական հարաբերություններով: Այդպիսի դիրքորոշումով են միջնորդավորվում նաև անբարյացակամությունը երեխա-դաստիարակ, մանկավարժ և նմանատիպ այլ հարաբերություններում: Շատ կարևոր է հասկանալ, որ ծնողի ցանկացած հրահանգ պետք է ժամանակային պայմանավորվածություն ունենա, և որ շատ կարևոր է, հրահանգի ոճը համապատասխանի երեխայի թեկուզ և լիարժեք չկազմավորված, բայց անձնային առանձնահատկություններին: Ընտանիքի հատկապես ծնողի անբարենպաստ ներգործության պայմաններում սոցիալական ընկալումները ուղեկցվում են այդ ներգործությամբ պայմանավորված երեխայի բացասական հոգեբանական նորագոյա-

ցումներով (չխելով, կատարողականության ցածր մակարդակով, կամակորությանը, ստախտությանը և այլն) որոնք ինքնին՝ ես-ի նեգատիվ դրսևորումներ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. АБРАМЕНКОВА В. В. Социальная психология детства: развитие отношений ребенка в детской субкультуре, Москва – Воронеж, 2000
2. АНДРЕЕВА Г. М., Социальная психология, М. 1980.
3. АНДРЕЕВА Г. М. Б. ДОНЦОВА А. И. – Межличностное восприятие в группе, М. Изд-во МГУ, 1981.
4. АРЗУМАНЯН С. Д., Психолого-криминологическая теория становления личности правонарушителя, Ереван - 2000, Зангак - 97.,
5. АРЗУМАНЯН С.Д., Микросреда и отклонение социального поведения детей и подростков, Ереван, 1980.
6. БОДАЛЁВ А. А., Личность и общение, М. 1983
7. Восприятие, Восприятие человека человеком – Психологический словарь, М. 1983, 1996.
8. ВЫГОТСКИЙ Л. С., Лекции по педагогике, Ижевск, 2001.
9. ВЫГОТСКИЙ Л. С., Психология, М. 2002.
10. ОБУХОВА Л. Ф., Возрастная психология, М. 1999.
11. РОМАНОВ А. А., Коррекция расстройств поведения и эмоций у детей. М. 2002.
12. СМЕРНОВА Е. О., УТРОБИНА В. Г. Развитие отношений к сверстнику в дошкольном возрасте, Вопр. Псих. № 3, 1996.
13. СМЕРНОВА Е. О., СОБКИН В. С., АСАДУЛИНА О. Э., НОВАКОВСКАЯ А. А., Специфика эмоционально-личностной сферы дошкольников, живущих в неполной семье, Вопр. Псих. № 6, 1999.
14. Социальная психология, под. Ред. А. Н. Сухова, А. А. Деркача, М. 2001.